ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

08. ապրիլի 2019 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Քասախ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 8-ի N 5 նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ՝ Ա. Աբրահամյանը, Ե. Աբրահամյանը, Մ. Վարդանյանը, Գ. Աբգարյանը, Ս. Հովհաննիսյանը, Հ. Ղազարյանը, Ա. Մարդանյանը, Հ.Գրիգորյանը, Ա. Թովմասյանը և Վ. Ղազարյանը: Նիստից բացակայում էր ավագանու անդամ Ա. Արմենակյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի ժ/պ՝ Նարեկ Մկրտչյանը,

Աշխատակազմի քարտուղարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ աշխատակազմի աշխատակիցները:

Նիստը արձանագրում էր գլխավոր մասնագետ՝ Փառանձեմ Ալոյանը:

Նիստ վարողն ողջունեց ավագանու ներկա անդամներին և փորձեց ներկայացնել ավագանու 2019 թվականի ապրիլի 8-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը: Ելույթի ձայն խնդրեց ավագանու անդամ Գ. Աբգարյանը նա նշեց, որ նախորդ նիստն անցկացվել է ընթացակարգային խախտումներով, մասնավորապես համայնքի ղեկավարի հրաժարականի հարցն ավագանու նիստի օրակարգում ներառված չի եղել և նիստի մեջ որպես հարց լսել «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքին և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին հակասում է, ըստ իրեն ոտնահարվել է ավագանիների իրավունքները, Ն. Մկրտչյանը նշեց, որ անձնական կարծիքները պետք չէ ընդհանրացնել և, որ դա Գ. Աբգարյանի սուբյեկտիվ կարծիքն է: Գ. Աբգարյանը նշեց, որ դիմել են համապատասխան մարմիններ հարցին ընթացք տալու համար:

Ելույթ ունեցան նաև Ա. Թովմասյանը, Ա. Մարդանյանը և Ա. Աբրահամյանը նրանք նշեցին, որ համայնքի ղեկավարի հրաժարականի դիմումը ներկայացնելուց հետո աշխատակազմի քարտուղարն ինչու չի հրավիրել արտահերթ նիստ: Նիստ վարողն նշեց, որ ըստ օրենքի ավագանին եռօրյա ժամկետում պետք է որոշում կայացներ համայնքի ղեկավարի հրաժարականի մասով: Լրացուցիչ նիստ հրավիրելու կարիք չի եղել, քանի որ նախորդ նիստը չի ավարտվել՝ օրակարգը չսպառվելու հետևանքով և բացի այդ ավագանին նույնպես կարող էր եռօրյա ժամկետում նիստ հրավիրեր այդ հարցը լսելու համար, որը տեղի չի ունեցել: Ելույթ ունեցան ավագանու անդամներ Մ. Վարդանյանը և Ե. Աբրահամյանը՝ նրանք նշեցին, որ նիստի են եկել քննարկելու համայնքի համար կարևոր նշանակության հարցեր և արդեն որ երրորդ անգամ է մի քանի անդամներ որոշակի նկատառումներից և իրենց սուբյեկտիվ կարծիքներից ելնելով խոչընդոտում են նիստի բնականոն ընթացքը, ինչ վերաբերվում է համայնքի ղեկավար Ա. Մկրտչյանի հրաժարականի հարցին՝ նշեց Մ. Վարդանյանը <Ասեմ, որ մենք՝ ավագանու չորս անդամներ, դեմ ենք համայնքի ղեկավարի հրաժարական տալուն, դա իմ կարծիքն է և ես լսել եմ մյուս երեք անդամների կարծիքները՝ իմաստ չեմ գտնում, որ այդ հարցն ամեն անգամ դնենք քննարկենք>: Նիստ վարող Ն.Մկրտչյանը պատասխանելով հնչեցրած հարցերին ևս մեկ անգամ հորդորեց չշեղվել նիստի օրակարգից, քանի որ ավագանու նիստերը վերջին շրջանում վերածվել են <դատական> նիստերի՝ մեղադրանքներով և վիրավորանքներով ու նշեց, որ եթե Գ. Աբգարյանը նկատում է օրենքի կամ ընթացակարգային որևէ խախտում, թող հիմնավորի այն օրենքի կետերով կամ դիմի դատարան, եթե ոչ ապա թույլ տա համապատասխան մարմիններին, որոնց ինքը դիմել է՝ տան համապատասխան պարզաբանում: Ավագանու անդամ Ա. Աբրահամյանի հարցին, այն մասին, որ Քասախ համայնքի 2019 թվականի բյուջեն համարվում է հաստատված՝ Ն. Մկրտչյանը պատասխանեց, որ այո այն օրենքի ուժով համարվում է հաստատված: Գ. Աբգարյանը նույնպես մի քանի անգամ հարցրեց, թե արդյոք համայնքի 2019թվականի բյուջեն համարվում է հաստատված, Ն. Մկրտչյանը մեկ անգամ ևս հաստատեց, որ օրենքի ուժով Քասախ համայնքի

2019 թվականի բյուջեն համարվում է հաստատված: Ա. Թովմասյանը նշեց. <Ես ձեր հետ աշխատելու չունեմ>, Գ. Աբգարյանը կանգնեց և հայտարարեց, որ ինքը նիստում այլևս անելիք չունի: Ավագանու վեց անդամներ՝ Ա. Աբրահամյանը, Գ. Աբգարյանը, Ա. Մարդանյանը, Հ.Գրիգորյանը, Ա. Թովմասյանը և Վահե Ղազարյանը բոյկոտեցին և դուրս եկան նիստերի դահլիճից:

Այսպիսով՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը՝ քվորում չապահովելու պատճառով Քասախ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 8-ի N 5 հերթական նիստը համարվում է չկայացած:

Համայնքի ղեկավարի ժ/պ

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ ________________

Նիստն արձանագրեց Փառանձեմ Ալոյանը ________________